

1843 ԲԱԶՄԱՎԷՊ 1912

Հ Ա Ն Դ Ի Ս Ա Ր Ա Ն

ՀԱՏՈՐ
Հ
ՀՈԿ-ՆՈՑ
Թ. 10-11

ԱԳՐԱՅԻՆ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ
ԱՄՍԱԹԵՐԻ

ԲԱՆԱՍԵՂԾԱԿԱՆ ԼԵԶՈՒՆ

ԵՒ ՀԱՅՎԱԿԱՆ ՉԱՓԻՆ ԳՐԱՒԱԾ ՏԵՂԸ

Ա. Բնութեան լեզուն և անոր կապը բանաստեղծութեան և երաժշտութեան հետ: — Տարալագութիւն. դանազան չափերու ճնշուղջ: — Բ. Բանաստեղծութեան տեսակները և անոնց կամազատւած չափերը: — Պարզ կամ սարքապան տողեր: — Գ. Բարդ կամ զարդացած չափեր: — Դ. Խառն չափերով քերթուածներ. անոնց նպատակը: — Ե. Իմաստներու տողանցումներ. անոնց նպատակն և արգասիքը: — Զ. Հայկական չափ: — Է. Հայկական չափին կազմութիւնը: — Ը. Եկտ. շեշտերու տեսակներ և դանազանութիւններ. անոնց գործածութեան կերպերը: — Թ. Նոր առաջարկուած չափ մը. Հայկական մետաստոստեան: — Ժ. Բազմատոթիւն կայկական չափին՝ խոսյական մետաստոստեանին հետ: — Բանական և ձայնական շեշտերու իբրքով տարբերութիւնը: — Նմանութիւններ երկու վերոյիշեալ չափերուն մէջ: — ԺԱ. Հակառակ առարկութիւն և անոր լուծումը: — Եզրակացութիւն:

Ա. — Բանաստեղծութիւնը բնութեան լեզուն է:

Բնութիւնը կազմող ամէն մէկ տարբեր ունին իրենց յատուկ հմայքը: Օղջ՝ որ կը սօսափէ ծառերու տերեւները, առուակը՝ որ կարկաջահոս կը սողոսկի քարերու միջէն, թռչնիկները՝ որ կը դայլայլեն

նդիկներու վրայ՝ բնութեան լեզուն կը խօսին, բայց ոչ այն լեզուն՝ զոր կը հնչեցընեն կայծակներու ճայթիւններն, և ամպերու գոռոռալը, հեղեղներու վիժելն և աորիծներու մոնչելն, թէպէտ և վերջիններս ալ՝ առաջիններէն ոչինչ ընդհատ՝ մի և նոյն բնութեան լեզուով կը խօսին: Բնութեան մէջ ամէն մէկ առարկայ, ամէն մէկ երեւոյթ՝ ունի խօսելու յատուկ ձեւերու ձայներ, որոնց միութիւնը կը կազմէ տիեզերական ներդաշնակութիւնը՝ բնութեան գրկին մէջ:

Մարդն ալ բնութեան մէջ առարկայ մ'է, և անոր վրայ տեսնուած երեւոյթներն ալ՝ բնութեան երեւոյթներու շարքին մէջ են: Այդ երեւոյթներէն մէկն ալ լեզուն կամ խօսքն է, որով մարդը կը բացատրէ իր միտքն և զգացումը: Բայց ոչ ամէն միտք և ոչ ամէն զգացումն կարելի է միեւնոյն լեզուով քայքայելու: Այսին և արիութիւնը, տրամութիւնն և ուրախութիւնը, սէրն և ատելութիւնը, և ուրիշ ամէն ընդդիմակ զգացումներ՝ լեզուի մէկ-մէկէ տարբեր յատկութիւններ կը պահանջեն: — Եւ եթէ այսպէս է սովորական խօսելու կամ գրելու մէջ, որչափ

աւելի բնութեան գերագոյն լեզուին՝ բանաստեղծութեան մէջ:

Բնութիւնը ներդաշնակութիւն մ'է. աւոր անվիճելի լեզուն երաժշտութիւնն է, և բանաստեղծութիւնը մաս մ'է երաժշտութեան, անոր մէջ կերպն է: Բանաստեղծութիւնը կրնայ գրուիլ թէ՛ արձակ և թէ՛ չափուած տողերով, բայց թէ՛ մէկուն և թէ՛ միւսին մէջ՝ սովորական կամ ընթացիկ լեզուէն տարբեր լեզու մը կը գործածէ, որ իրեն յատուկ ներդաշնակութեամբ՝ երաժշտական եղանակ մը կը ստեղծէ: Այո՛, արձակ տողերով ալ կարելի է բանաստեղծել, բայց Մուսաներու սրբած լեզուն տաղայափոփոխն եղած է, և այս վերջինս՝ բանաստեղծութեան մէջ երաժշտական գործիքի պաշտօնը կը վարէ:

Ընչպէս երաժշտութեան մէջ այլեւայլ գործիներ՝ այլեւայլ կիրքեր բացատրելու յատկութիւնն ունին, այսպէս ալ տաղաչափութեան մէջ զանազան չափեր՝ զանազան զգացումներ ցուցադրելու սահմանուած են: Այդ սահմանումը յառաջ կու գայ չափին և զգացման՝ իրարու հետ ունեցած հոգեկան և ձայնական ներդաշնակ յարաբերութեանէն:

Ամէն չափ՝ ամէն զգացմունքի հետ չի ներդաշնակիր. երբ կիրքը կամ զգացումը փոխուի և կամ աստիճանաւորութիւններ արտայայտէ, պէտք է որ չափն ալ կամ տողն ալ անոնց համեմատ փոփոխուի կամ աստիճանաւորի, նման՝ գործիքի մը մեղմ, միջակ և զօրաւոր լարերու թրթռացումներուն:

*
* *

Բ. — Մարդկային կիրքերու այս զանազան փոփոխութեանէն յառաջ եկած են ուրիմն երգելու կամ տաղաչափելու զանազանութիւնները, որոնք երգուելիք նիւթին կամ առարկային և կամ գործիքին անուններով՝ այլեւայլ կոչումներ ստացել են բանաստեղծներէն. զոր օրինակ, պարերգութիւն, հովուերգութիւն, բամբուր-

գութիւն, քնարերգութիւն, եղերերգութիւն, ողբերգութիւն, թատերգութիւն, հագներգութիւն կամ դիւցազներգութիւն, և այլն:

Այս տեսակ տեսակ երգոյրիւնները՝ ոչ միայն կը պահանջեն որ իւրաքանչիւրին համար երգչին երգ գործածեն համապատշաճ լեզու և ոճ, այլ նաեւ յատուկ եղանակ կամ երգի ելիւէլներ, որոնք կախումն ունին բառերու յատուկ շարուածներէ, սեփական դասաւորութիւններէ:

Քառերու այս յատուկ դասաւորութիւնները կամ հիւսուածքը՝ ծնունդ տուած են չափական այլեւայլ տողերու, սկսեալ եռավանկէն մինչեւ տասնըվեց վանկերով տողերու:

Կարճ տողերը, զոր օրինակ, եռավանկը, քառավանկը, հնգավանկը, կրնան ծառայել գողտրիկ, քնքոյշ բացատրութիւններու, որոնց ներդաշնակութեանէ՛ն՝ ականջը մտքէն շատ աւելի զո՛ր կը մնայ: Այսպիսի տողերը բանաստեղծութեան մանկական և պատանեկան քայլերն են, աւելի տղայոց մտքին հետ խօսող՝ քան զարգացած սիրտերու. անոնք անմեղութեան աւազներն են, բնութեան մէջ ճշտող թրուշնիկներու ճշտողիւններուն արձագանգներն են: — Այս տեսակ չափերու մէջ մէկ օրինակ մէջ բերենք:

ԵՌԱՎԱՆԿ	ՔՈՒՅՎԱՆԿ
Ոչ պարտոյք	Այո՛, հանգոյծ
Լուսագեղ	Առոյգ քո ստակ
Քաշտոյք՝	Է՛ գարնայնոյն,
Ի կանթեղ	Ո՛ պատանեակ.
Պանի լոյծ,	Այլ նա ծնախի
Ինչ բոցոյն	Վերակենցաղ
Սպառի բոյժ	Ամբ ամբ
Յանկարծոյն:	Պերճ և չքնաղ.
Ոչ սըրտի	Իսկ փախըտեալ
Իչ զբարթ	Քոյք մանկութիւն
Փայտիցիք	Ոչ եւս զստոյ
Չքնաղ վարդ,	Ի ախ ք նոյն:
Ելի՛ք ոչ	
Կենսաբեր	
Ի հոգոյ՛	
Յօգէ սեր.	

ՀՆԳԱՎԱՅՆ

Առանց քայլերոյ	Չուրի էր նա յօրոյ,
Ընթացու ընդ ծով,	Մեռուս ոչ գորով,
Իւ շունէր նաւակ,	Եւ շունէր յըստակ,
Անողոյ ի ջրոյ՝	Ո՛վ իջէ այց մարդ,
Թազեցու ընդ ջրով	Ասա՛ դու ինձ արդ,
Ի ծովուն յատակ.	Իւ ստասպելիս
	Իմ գիտակ լինիս:

Այսպիսի կարճ տողիկներու մէջ անշուք լեզուով՝ կտրուկ իմաստներ միայն կրնան պարունակուիլ, բարոյական վճիռներ, ամենապարզ նկարագիրներ, առածներ, առակներ, հանելուկներ. բարդ զգացումներու կամ կիրքերու յարմար չեն, նման գողտրիկ հասակի սիրտերուն. բառախաղեր են մանաւանդ քան թէ իսկապէս բանաստեղծութիւններ:

* * *

Գ. — Բայց այս փորձազոյն չափերը՝ տարերք են մեծազոյններուն: Այս տողիկներուն կրկնուելով՝ կը ձեւանան վեցոտներ, ութոտներ և տասնոտներ չափերը, և երեքկնելով՝ կը կազմուին իննոտներ, երկոտասանոտներ և հնգետասանոտներ չափերը. ինչպէս նոյններն իրարու հետ ձուլուելով՝ կը ծնանին հոթնոտներ և մետասանոտներ տողերը:

Հետեւաբար՝ առաջինները կրնանք կոչել տարրական կամ պարզ չափեր, իսկ վերոյիշեալ երկրորդ խումբինները՝ զարդան կամ յարդ չափեր:

Բարդ չափերը կամ տողերը՝ բանաստեղծական լեզուի երիտասարդութիւնը կը ներկայացընեն. ընդունակ են աւելի կամ պակաս կերպով մարդկութեան նոյն հասակին մէջ զգացած կիրքերու բացատրութեան, յարմար են յատկապէս պարերգութեան, հովուերգութեան, քնարերգութեան, եղբերգութեան, կատակերգութեան և ընդհանրապէս այն ամէն նիւթերու՝ որոնք հեռի են ծայրագոյն կիրքերէ: Չեմ ըսեր թէ անոնք բացարձակ կարող չեն՝ տարրական չափերու պէս՝ կրից աստղագոյն աստիճաններն ալ բացատրե-

լու, այլ ըսել կ'ուզեմ որ ամենայարմար չեն, մանաւանդ վեցոտներն իննոտներն:

Այս չափերէն մաս մը զոգտւման են, այսինքն՝ վեցոտներ, ութոտներ, տասնոտներ և երկոտասանոտներ, իսկ մաս մ'ալ անգտւմանի, որ են՝ հոթնոտներ, իննոտներ և մետասանոտներ: Անգտւման կենցաղները աւելի ներդաշնակ են քան զուգտւմանները: Այս վերջիններէն՝ վեցոտներ և ութոտները աւելի սահուն և քաղցր են քան տասնոտներ և երկոտասանոտներն. իսկ անգտւման կենցաղներէն՝ գերազանց կերպով ներդաշնակներն են հոթնոտներն և մետասանոտներն, իսկ իննոտներն և հնգետասանոտներն՝ տաղտկալի:

* * *

Գ. — Զգայուն ականջի տէր տաղաչափները շատ անգամ քերթուածներու մէջ փոփոխութիւն կը մտցընեն այլեւայլ չափերով տողերու. զոր օրինակ հետեւեալներն և անոնց նմանները:

4 ոտներ և 7 ոտներ

Աստուածատունկ
 Ի յարեւոյ էր պարտեզ,
 Էին ծաղկունք
 Անդ և ծառոց ազգ պէսպէս:
 Ի նա ազբիւր
 Որպէս հոգի ի մարմնի
 Շուրջ նամասփիւս
 Բերեւ ըզուր կենդանի:
 Մանկաւոր
 Էր արծաթեալ անդ լարիւ
 Կապեալ սափոր
 Մըշտուելով ի յարիւ:
 Իւ յոզնախուրք
 Ի նմանէ ծառք և բուսակք
 Յուշիկ ի յուսկ
 Անուրիս բոյժ և հարակ:

6 ոտներ և 7 ոտներ

Մընա Տէր ի մշուր
 Մընա Աստուածն յախանոց.
 Չոս բերրոյք սիրտ մարցուր,
 Խոնարճ նոգիս նեղ անձանց:

Ընդ հրկշտակս երգեսցուք
 Ըզնաշուքիսն աւետիս.
 ԸզՅիսուս որմեսցուք
 Զհնկաւ փերկին աշխարհիս:

7 ոտնեան և 8 ոտնեան

Գեղեցիկ է՝ լուրջ առուստ
 Յոր արուսեակըն ծաղկեաց.
 Վայելուէ են՝ ի մարզ յարօս
 Գառնիք ճեմեակք ընդ մարեաց.
 Վայելուէ է՝ հասուն ողկոյց
 Յարմատենի զերարուն,
 Վարդ գեղեցիկ աչաց ի յայդ
 Ի թուփ դարս ցոցատուն:

5 ոտնեան և 11 ոտնեան

Գալարին լաքք, խուսափէ քնար ի զըրկաց
 Էչ սիրս նըւարի
 Յորժամ ըզքեզ իշիէ հնչել ամբխած,
 Ո՛վ մարք քաղցրադի:
 Մ՛այր, ո՛հ, մ՛այր, և յառաջ Բ՛բբր խաղալ
 Թէ ոչ պնդես զես,
 Զես՝ յայք հակատ ծրդի զըթոյդ կարկանդակ
 Գըրեաց յՈրդեղերս:

7 ոտնեան և 11 ոտնեան

Ենաս զարուն, զըզուէ զմարմանդ մեր և ծառս,
 Ծրազիէ խրճտորն և մամփի.
 Ուռք արտասուեն և ուռնեաց կազմի վարս,
 Սարեակ սիրով կըղզղի.
 Շողան այերք, իշանէ ցոզ հանդարտիկ,
 Բոյք և դարս արմակի.
 Համայն զարմալ ի կարքն սնկեալ գայ ծաղիկ.
 Մեզ մեն Բուժի՛կ լըժողի...
 Ո՛հ, հէ բացի՛ր Բուժիկ, բացի՛ր մեր ծաղիկ,
 Ասլ մի՛, ո՛հ, մի՛ նոյ վայր յերկիր.
 Բացի՛ր փթըժեաց նորաբողբոյ՝ նուրբ ծըղիկ
 Յօգեալ ի տունն իսկակիր:

Եղած են քերթողներ ալ՝ որ իրենց
 զրածին իւրաքանչիւր տողերը յօրինել են
 այլեւայլ չափերով՝ աւելի փոփոխութիւն
 տալու համար. քերթուածին:

Այսպիսի խառն տողերը՝ միաչափ և
 միայար տողերու հետ բաղդատելով՝ քայլ
 մը կրնան համարուիլ ներդաշնակութեան
 զարգացման և տաղչափական արուեստի,
 և անշուշտ ծնունդ պիտի չունենային՝
 թէ որ միաչափ տողերու արտասանու-
 թիւնները փափուկ լսելեաց տաղտուկ ազ-

դած ըլլային: Երգ մը որչափ ալ ներ-
 դաշնակ իազներ է կամ ձայնի ելեւէջներէ
 կազմուած ըլլայ, սակայն երբ հարկ ըլ-
 լայ միշտ միեւնոյն եղանակի կրկնութիւնը
 լսել՝ ներդաշնակութիւնը ծանծորոյթի կը
 փոխուի: Հիմնալի են դեղձանիկին աշ-
 խոյժ գեղգեղները, բայց կարելի չէ եր-
 կարատեն ախորժով մտիկ ընել, որով-
 հետեւ յարատեւ եղանակին փոփոխու-
 թիւնները սակաւաթիւ են. բայց աշխար-
 հիս վրայ կարծեմ եղած չէ. անձ մը՝ որ
 ծանծորոյթ զգացած ըլլայ ստիպակին երգե-
 լէն և անոր հազար տեսակ ձայնի ելեւէջ-
 ներէն ու սուլոցնհերէն: — Ախորժելով կը
 լսենք քնարի կամ սրբնի մը քաղցրա-
 ձայնութիւնը, բայց չափ մը ժամանակի,
 որովհետեւ անոնց լարերուն և կամ բըլ-
 թակներուն միակերպ թըթոռւմները՝ քիչ
 փոփոխութիւններով կ'ազդեն ականջի
 վարագուրին նեարդներուն վրայ, որոնք
 օդոյ ալիքներու միատեսակ բախումներէ
 կը յոգնին, կը թմբբին և հուսկ ուրեմն
 կը նեղուին. բայց շատ աւելի ախորժով
 և երկարատեւ կրնանք մտիկ ընել զու-
 գաղաշն զանազան գործիներու միայժամ
 մանակ ազդած ելեւէջներուն համերգու-
 թիւնը:

Սակայն կարելի չէ ամէն նիւթ խառն
 տողերու բաղդադութեամբ գրել՝ տաղտուկ-
 ձայնութենէ ազատելու համար: Որքան՝
 ալ՝ եռավանկէն սկսած մինչեւ ութավանկ
 տողերը խառնելով տասնտոնեանի և մե-
 տասնտոնեանի հետ՝ կ'ունենանք աւելի
 ներդաշնակութիւնը, բայց այդ կարճ տո-
 դերը, ինչպէս վերն բոխ, չեն կրնար յար-
 մար չափեր համարուիլ լուրջ և ծայրա-
 գոյն զգացումներու համար. եթէ մէկ կողմէ
 ներդաշնակութիւնը կ'աւելցրնեն, միւս կող-
 մէն կ'իրգերու բացատրութեան ոյժը կը
 նուազեցընեն:

* *

Ե. — Այս վերջին անպատեհութեան
 առաջն անելու նպատակաւ՝ շատ անգամ
 ստիպուել են քերթողները՝ կամայ կամ

ակամայ՝ իմաստ մը մէկ տողէն յաջորդին մէջ շարունակել և լմնցընել, որպէս զի նախ՝ միակերպութիւնը կորոնն, և երկրորդ՝ իմաստին ոյժը չտկարացընեն։ — Այս հնարքը իրաւցնէ միջոց մ'է այդ բարի նպատակներու հասնելու, բայց այդ միջոցն ալ իր կարգին կը ծնանի ուրիշ անպատեհութիւններ, ուրիշ խանգարումներ ներդաշնակութեան, մանաւանդ երբ ստէպ գործադրուի և անարուեստ կերպով։ — Միտքս լաւագոյն բացատրելու համար՝ ըստծա օրինակներով պարզեմ։ —

Իրր նմոյշ այս տեսակ տողերու՝ բարդ չափերու մէջէն առնենք ամենէն աւելի ներդաշնակները, եօթնոտնեան և մետասանոտնեան։ — Օրինակ եօթնոտնեանի։

Անծանօթից հանդիպեալ
 ինձ, և սահն. Ողջոյն քեզ,
 Ողջոյն, պանդուխտ ատասպեալ,
 Ասմ. Զիւրք դու կայցես.
 Ա՛, պանդուխտ ողջոյն մի՛
 Տայք, մի՛ յարեան ըզբեր իւր
 Ողջեանջիւր. ոչ կամի
 Ողջաթեանաց ձերոց զիւր. .

Արդ, այս և ասոնց նման տողերն արտասանողը՝ պէտք է որ իմաստին համեմատ արտասանէ, ապա թէ ոչ՝ իւրաքանչիւր տողի վերջը ընդհատելով ձայնը՝ իմաստները կը խանգարուին։ Ուստի առողջանութեան մէջ՝ համաձայն ուղիղ արտասանութեան՝ վերոյգրեալ եօթնոտնեաները պիտի վերածուին հետեւեալ բաժանումներուն.

Անծանօթից հանդիպեալ ինձ և սահն. . . 11 ոտնեան
 Ողջոյն քեզ ևտասպեակ
 Ողջոյն, պանդուխտ ատասպեալ . . . 7 ոտնեան
 Ասմ. Զիւրք դու կայցես 7 ոտնեան
 Ա՛, պանդուխտ ողջոյն մի՛ տայք . . . 8 ոտնեան
 Մի՛ յարեան ըզբեր իւր ողջեանջիւր. . արձակ
 Ու՛չկամի զմաթեանաց ձերոց զիւր . . 9 ոտնեան

Արդ, երբ իմաստը կը պահանջէ այս բնական բաժանումներով բառերն արտասանել, անդին ականջը կը զգայ որ ներդաշնակութիւնը կը խանգարուի, և կը

ծնանին այնպիսի տողեր՝ որ կամ իրարու հետ զուգադաշն չեն և կամ աւելի արձակ քան չափական բաժանումներ են։ Որով հարկ է կամ ներդաշնակութիւնը իմաստին գոհել, կամ իմաստը ներդաշնակութեան։ Այո՛, միակերպութիւնը կը դադրի, իմաստին ոյժը չի տկարանար, բայց ներդաշնակութիւնը կը տուժէ և կամ կ'անհետանայ։

Օրինակ մ'ալ մետասանոտնեանէն.

Չանպատեիլ ըզվիշտս իմ, մի՛ թագուհի,
 ինձ նրբաման տաս նորոգել, թէ՛ սրպէս
 կործանեցին Դանայեցիք ըզՏրովեան
 Հարատուութիւնն և զպետութիւնն եղկեթ...
 Բայց եթէ՛ սյդքան մեծ փափաք քեզ իցեն
 Չանցս աղետից մերոց զիտել, և լըսել
 Չունակ աւերումն Տրոյիոյ կարճ ի կարճոյ,
 Թե՛ և սոսկայ եղբա յիշել զայնոսիկ
 Եւ ի ցաւոց խոյս տայ, սակայն ըսկըսայց։

Արդ, զրենք ըստ ուղիղ առողջանութեան իմաստներուն՝ այս տողերը, և պիտի ունենանք.

Չանպատեիլ (ը)զվիշտս իմ, մի՛ թագուհի 11 ոտնեան
 ինձ (ը)բաման տաս նորոգել. . . 8 ոտնեան
 Թե՛ սրպէս կործանեցին Դանայեցիք արձակ
 ԸզՏրովեան հարատուութիւնն և զպետութիւնն եղկեթ. . . 15 ոտնեան, հայկ. շափ.
 Բայց եթէ՛ սյդքան մեծ փափաք քեզ իցեն 11 ոտնեան
 Չանցս աղետից մերոց զիտել. . . 8 ոտնեան
 Եւ լըսել զունակ աւերումն Տրոյիոյ կարճ ի կարճոյ. . . 15 ոտնեան, հայկ. շափ.
 Թե՛ և սոսկայ եղբա յիշել զայնոսիկ 11 ոտնեան
 Եւ ի ցաւոց խոյս տայ, սակայն ըսկըսայց 11 ոտնեան

Կայ իրաւցնէ փոփոխութիւն չափերու, բայց ոչ ներդաշնակութիւն, ոչ դիւցազնեղբութեան մը (ինչական) պատշաճ տաղաչափութիւն, այլ անզուգադաշն տողեր և արձակ ըսուածներ։ Այլըր ոտանաւոր կը տեսնէ, բայց ականջը կը խայթի և կը բողոքէ, եթէ պակասաւոր և կամ անզգայ ականջ մը չէ։

*
**

Չ. — Ուստի, թէ՛ միաչափ տողերու ազգած տաղտուկին առջեւն առնելու, և թէ՛ իմաստի մը տողէ տող անցնելով՝ աննորաշնակ չափերով գերթուած մը յօրինելու անպատեհութիւններէն խոյս տալու համար՝ միակ միջոցն է գործածել հայկական չափը, որ բանաստեղծական լեզուին արուն հասարկը կը ներկայացընէ. անոր գերագոյն զարգացման աստիճանն է, որ իր մէջ կը պարունակէ բանաստեղծութեան պատանեկան եռանդը, միանգամայն և երիտասարդ տարիքին կորովը:

Հայկական չափը՝ զոր միակ ճանչցեր և գործածեր են մեր հին նախնիք՝, (հայ լեզուի ներդաշնակութեան անվիճելի զգացողներն և ուսուցիչները), ժամանակ մը գրեթէ մոռցուած, արարական չափերու ողողման մէջ ինզղուած, կարօտ եղած է իսկապատեհի մը փափուկ ակնաջնեքուն՝ խորասոյզ անդունդէն վեր բարձրանալու և դարձեալ իր փառաշուք գահոյքին վըրայ բազմելու համար:

Հայկական չափը մեր լեզուին սեփականութիւնն է, հայ ակնաջնեքու սիրած ներդաշնակութիւնը: Կը պարունակէ համազօր տողերու՝ այլազան ներդաշնակութիւն, որով տաղտուկութիւն չի բերեր լսելիաց. կը պարունակէ միանգամայն իւրաքանչիւր տողի մէջ իմաստից ամբողջութիւն, որով ծնունդ չի տար տողէ տող օտար բաժանումներու և կամ խառն և աննորաշնակ չափերու:

Հայկական չափը ամենայարմարն է նկարագրութեանց բոլոր գեղեցկութիւնները դուրս ցատեցնելու, կրքերու ամէն շարժումները, ամէն աստիճանի յուզումները քանդակելու. իր ծանր և վսեմ ներդաշնակութեամբ՝ թատերական և դիւցազնական գործերու վեհութիւնը կը պատ-

կերացնէ և արտասանողին միտքը կը դիւթէ. կը գեղու ընթերցողին սիրտը ուրախութեան, զթոյ, մոլեգնութեան, ցաւոց, և ուրիշ բոլոր ծայրագոյն կիրքերու զգացումներով, որոնցմէ ներշնչուած է բանաստեղծը:

Հայկական չափը՝ իր ներդաշնակ և յարափոփոխ, բայց միանգամայն զուգամանակ անդամներու և համազօր տողերու կազմութիւնով՝ երաժշտական բարձրագոյն զարգացումը կը ներկայացընէ տաղաչափութեան մէջ. բանաստեղծական գործիքներուն երգեհոնն է, որ իր մէջ կը բովանդակէ դաշնակի, ջութակի, քնարի, սրնգի, զանազան գալարափողերու քաղցրութիւնները միանգամայն:

Հայկական չափին գերազանց յատկութիւնները կազմողները չեն՝ ո՛չ զլարար լեզուին բառերն ու հորովները, բայերն ու խոնարհումները, ո՛չ շարադրութեան ետեւանալ դասաւորութիւնը, ո՛չ քերականական և տրամարմանական ձեւերը: Այս աւմէն ձիւրքերն ալ լեզուին սեփականութիւններն են, և կրնան՝ զրոյին հմտութեան և ճարտարութեան համեմատ՝ կորովութիւն տալ թէ՛ հայկական չափով գրուած տողերուն և թէ՛ նաեւ ուրիշ ո՛ր և իցէ չափով գրուածներուն:

*
**

Է. — Հայկական չափին սեփական ձիւրքերը տուողներն են նախ՝ իր տողերուն կազմութիւնը, և երկրորդ՝ շեշտաւորութիւնը:

Հայկական չափն իր մէջ կը բովանդակէ՝ բաց ի հնգտունեանէ՝ մնացած բոլոր չափերու քանակները: Քառանգամ են տողերը, իրարու համազօր՝ բայց ոչ համավանկ, վասն զի անոր անդամները զուգամանակ են՝ այլ ոչ միշտ հաւասարավանկ:

1. Ուրիշ տեղ յոյս տուի եմ թէ նախնիք ո՛րքան օգտուի են հրապարակ և ասորական չափերէն՝ հայ-

կական չափը կազմելու համար. (Ռազմ. 1899. Հայկական Ասորական Տարալիպագրութիւն):

Առաջին անդամը կրնայ մէկ վանկէ մինչեւ չորս փոփոխուիլ:

— Մէկ վանկ կրնայ ըլլալ՝ երբ յաջորդ անդամը քառավանկ բառէ մը կազմուած ըլլայ. զոր օրինակ.

Ո՛վ / լուսապայծառ / վե՛ գերարգիք / տիեզերաց,
Ե՛կ, / գաղարիցիս / ուրե՞ն ասորէն / կեղզարքոտ,
Քե՛ս / առտուածազարմբն մանկան տու՛րբս բերցնե,
Մե՛ / գարծուցաներ / յննէն զերեսդ / յապաշնորէս:
Չէր / ոք ընդդիմակ / կարող նորս / կալ երեսանն,
Ո՛ն, / քաջախերանց, / շէք մեզ երկեւզ / ինչ ուստեք:
Հինդ / են զօրավարք / իշխանակիցք / համապատե.ք:

— Երկու վանկ կրնայ ըլլալ՝ երբ յաջորդ անդամը եռավանկ և կամ քառավանկ ըլլայ. զոր օրինակ.

Հանին / կացուցին / չուկտ ընտիր / հաստարգուկ,
Անկցոք / յանկարծակի / յեղավարծուս / ուսու գնոքք,
Լրտմ՝ / զի նեծն. / բայց այս են իմ / թըլուստանք,
Խօսել / միանգամ՝ / առաջին նուազ / և վերջին,
Անկեալ / ես ուրե՞ն / ի նոյն աղմուկ / խոռվութեան՝
Որ այնչափ արտասուս / ի Յոյն ի քէն / կաթեցոյց:
Է նոյնպէս եղկիթ, / օրպէս եւ էսըս թըլուստ:
Յերեսս / իբ նըկարեալ / երեսեցոյց / զիբ գայրոյթ.
Եւ սիրտ / իմ գուշակեաց / ըզնուսնել / աղտոյց:

— Եռավանկ և քառավանկ կրնայ ըլլալ՝ երբ յաջորդ անդամն ալ եռավանկ և կամ քառավանկ ըլլայ. զոր օրինակ.

Փըրքըրեալ / մուկ Բաբ, / վարագաբար / զիբարն գուշ.
Փամ է արգ / առէք առ իս, / ազէ առէք / զոր կազմն կայ
Հուր և ջա՛ / նաւթիւ ձիթով / եւ ի ժըման / բոց բորբուքեալ:
Չուր գիցազուք / զօրծեն գուն / սաստիկ՝ զերկերն / ըմբռնելոյ:
Հեղեղասատ / փոթորեալ / զերփեան ըզէն / գանդ և գայգի:
Անդ ելանէր / նըմին գիպան / քաշն Աթթինեալ / մուեալ Վարչեր:
Ասպէս առի՛ծ / գարանակալ / ըզլի գաւթի / սովալըլուկ:

Երկրորդ անդամը կրնայ կամ երեք և կամ չորս վանկէ բաղկանալ, ինչպէս վերի օրինակներէն կը տեսնուի. բայց երբ առաջին անդամը մէկ վանկ է՝ երկրորդը չի կրնար քառավանկէն պակաս ըլլալ, որովհետեւ առաջին միավանկ անդամին հետ կցուելով՝ տողը եռանդամ կը մնայ:

— Երկրորդ անդամը չի կրնար նոյնպէս եռավանկ ըլլալ, երբ առաջին անդամը քառավանկ և չորրորդ անդամն ալ եռավանկ ըլլայ, որովհետեւ այդ պարագային՝ երկու եօթնուտեան հաւասարավանկ տողեր կը ձևանան՝ հայկական չափին մէկ տողին մէջ, ինչ որ հակառակ է այս չափին կազմութեան:

Երրորդ անդամը անփոփոխ կերպով միշտ քառավանկ կ'ըլլայ, ինչպէս վերի օրինակներէն կը տեսնուի. իսկ յորրորդ անդամը կրնայ ըլլալ քառավանկ և կամ եռավանկ. բայց երբ առաջին անդամը քառավանկ և երկրորդն եռավանկ է՝ չորրորդը պէտք է քառավանկ ըլլայ, որ տողը երկու հաւասարավանկ եօթնուտեաններու չվերածուի. — Երբ ամբողջ քերթուած մը կազմուի միշտ եռավանկ առաջին և չորրորդ անդամով՝ քառասրկան տող կոչումը կու տանք, որովհետեւ Բագրատունին այդ չափով թարգմաններ է թատերական քերթուածները. բայց նոյնը կարելի է հաւասարապէս գործածել նաեւ ուրիշ տեսակ քերթութեանց և նաեւ զիւցազնեղութեանց համար, առաջին անդամը 1—4 վանկերու փոփոխութեամբ:

Մինչեւ հիմայ ըսածներէս՝ հայկական չափին մէջ կ'ունենանք ուրեմն հետեւեալ փոփոխութիւնները վանկերու և անդամներու.

1 — 4 — 4 — 4	կամ 3
2 — 4 — 4 — 4	» 3
3 — 4 — 4 — 4	» 3
4 — 4 — 4 — 4	» 3
2 — 3 — 4 — 4	» 3
3 — 3 — 4 — 4	» 3
4 — 3 — 4 — 4	—

Անդամներու այս զանազան բաժանումները կը կատարուին ոչ թէ վանկերու համբանքով, այլ շեւտով:

* * *

Ը. — Շեւտը երկու տեսակ է. սար՝ որ ձայնն երկարելու կը ծառայէ, և րար՝

որ ձայնն իջեցնելու և հանգիստ առնելու նշանն է. ոչ մէկը և ոչ միւսը՝ սովորաբար ներթապէս չեն գրուիր, այլ բնական առողջամտութեամբ կ'արտասանուին:

Ենչոր՝ տաղաչափութեան կեանքն և հոգին է. առանց շեշտի՝ տաղտկութիւն և մեռելութիւն կը տիրէ:

Տաղաչափական շեշտը պէտք չէ շփոթել քերականական կոչուած շեշտին հետ, որ վանկերու սղութիւնն և երկարութիւնը կ'որոշէ. ինչպէս է յունական և հռոմէական լեզուներուն մէջ, որուն ձեռքով կը կազմուին անոնց ոտանաւորները: Այս տեսակ շեշտէ հայ լեզուն բոլորովին զուրկ է, չնայելով Ե. և Չ. դարերուն մէջ ոմանց ըրած Զանբերուն, որ կ'ուզէին նոյնը նաեւ հայերենի վանկերուն յարմարցընել. ապարդիւն Զանբ, քանի որ լեզուին բնական կազմութիւնը և ժողովրդեան ականջը չէին համապատասխաներ քերականազէտներու տեսական վարդապետութիւններուն:

Տաղաչափական շեշտը պէտք չէ շփոթել նմանապէս ձայնական շեշտին հետ, որ վանկի մը սրութիւնը կամ բթութիւնը կը ցուցնէ, ինչպէս են Յունաց, Լատինաց, Իտալացւոց, Սլաւոնացւոց՝ և ուրիշ ազգաց լեզուներու վանկերուն մէջ, որով այս վերջիններս կը ձեւացընեն հատու, յարաշեշտ, նախարաշեշտ, և այլն, բառեր: — Հայերէնն այսպիսի շեշտէ գրեթէ զուրկ է, եթէ հաշուի շառնենք քանի մը բարդ բառերու շեշտեր. զոր օրինակ. այդպէս, այսքան, որչափ, նոյնքան, այսօր, այսյուրս, և այլն:

Տաղաչափական շեշտն է՝ բանական կամ տարնական կոչուած շեշտը, որ ցոյց կու տայ գաղափարներու կամ զանոնք բացատրող երկու կամ աւելի բառերու իրար հետ ունեցած սերտ յարաբերութիւնը. և այս բանական շեշտն է բանալին հայկական տաղաչափութեան:

Վերն ըսինք որ տաղաչափական շեշտը կրնայ ստր և կամ բար ըլլալ: Բարբ կը կոչուի նաեւ հանգիստ. հետեւաբար պար-

զապէս շեշտ բառով կը հասկըցուի ընդհանրապէս ստր շեշտը:

Ենչոր կրնայ գտնուիլ տողի մը ամէն մէկ անդամին վերջին վանկին վրայ, և կը ծառայէ անդամներ իրարմէ բաժնելու, առանց բացառութեան նաեւ վերջին անդամին՝ յաջորդ տողին առաջին անգամէն: — (Օրինակներ.)

[ազան

Բերեալ վաղի մատուցէ կրկին ի ձեռս իմ գալիստութեան՝ բանակաց զորապետի պատերազմայ: Եւ երկր թեւեալ ի դո՛վ երկաթակու սքմակաց Բոցաշունն երկվարաց, զոռք և իւրիւնք, զնուց փայլք:

Ինչպէս այս օրինակներու՝ այսպէս ալ ուրիշ նման տողերու մէջ՝ շեշտին բանական ըլլալը յառաջ կու գայ բառերու դասաւորութենէն, որով նախքան շեշտ դամի մը վերջին բառը այնպիսի սերտ կերպով կապուած է յաջորդ անդամին կամ անդամներուն հետ, որ ուրիշ առաջանութիւնը կը պահանջէ ձայնը այնպէս բարձրացնել կամ երկարել՝ իրեւ թէ նոյն վանկը օժտուած ըլլար ձայնական շեշտով: Եւ յիշուի, ինչպէս կարելի է մակբայը բայէն զատուի, գոյականը իր ստացական զերանունէն, յատկացուցիչը իր յատկացեալէն, ածականը գոյականէն, և այլն: Չէ կարելի առանց իմաստին իսանգարուած պատճառելու՝ վերոյգրեալ և անոնց նման տողերու մէջ՝ հանգիստ տալ ձայնի՝ ուր որ բնական շեշտ կայ. չէ կարելի մէկէ աւելի շեշտութեամբ արտասանել Բերեալ վաղին վատուցի՝ կրկին ի ձեռս իմ գառապակ իշխանութեան, և կամ Եւ երկր թեւեալ ի դո՛վ երկաթակու սքմակաց յոցաշունն երկվարաց:

Բայց թէ որ միշտ այսպէս սուր շեշտով բաժնուին տողերու անդամները, արտասանութիւնը՝ թէ և կորովի՝ բայց պարտաւեցուցիչ կը դառնայ, և շեշտերու միակերպութիւնն ալ գուցէ աւելի տաղտկալի պիտոր ըլլայ՝ քան թուաչափ վանկերով անդամատուցութիւնը: Ուստի ներդաշնակութիւնը կը պահանջէ որ չափական տողերը կազմուին ընդհանրապէս փոփո-

խակի սուր և բոք շեշտերով օժտուած անդամներէ, որոնց սուր շեշտերը՝ տողին կորով կ'ընծայեն, իսկ բուժները՝ սահունութիւն և հանգիստ:

Բուժ շեշտը կամ հանգիստը կը գրտնուի սովորաբար տողերու երկրորդ և չորրորդ անդամներուն վերջը. գոր օրինակ.

Ամենայն կորիս է քէն. յաղթող են քո՛ ըրնաւորք. Պատուան քո է պատրաստ. Թէ չփախնուցու՛ մեռանիս. Երթ, մի վերիբ ժամալանաւ, կալ զգինու՛րդ առաջնորդ:

Ոչնդամներու վերջը գտնուած առոգանութեան նշանները՝ բոք, ստորակետ, միջակետ և վերջակետ, միշտ հանգստի կը ծառայեն. բայց անոնք կրնան գտնուիլ նաև անդամներուն մէջերը՝ առանց տաղաչափական հանգիստ ցուցնելու. գոր օրինակ.

Դիք, որ զսէրն իմ և գո՛րս տեսնէք / աստանօր:
Սակայն չէ՛ նա, տիկին, ի նասարակ սիրողաց:
Տեսանեմ՝ զի ստոյգ պատմեալ՝ ևն ինձ. նախանձն / իմ արգար:

Անկէ՛ր / քո թընամիշտ / առ դուրս քո՛ | են, չըրովմ:

Հանգիստը սովորաբար, ըստ, երկրորդ և չորրորդ անդամներուն վերջը կը գտնուի, բայց արգելք մը չկայ՝ իմաստին պահանջելուն համեմատ՝ նաև առաջին և երրորդ անդամներն ալ հանգիստով վերջացրնելու. գոր օրինակ.

Լաւ դիտէ Յովիդայէ քան զոր ասէն՝ զազ Նորա.
Ձի՛նչ և է, գուշակեմ ըզնա նոցո՛ւն մա՛ւաբեր:
Ջրասցին, իսկ որ յետ սյորք զայցէ՛ մի՛մ պարանոց:
Ակն ունիմ թէ նոր և սուր՝ յաչաց իմոց հուսկ յետոյ
Ըղտանարս այս աստի՛ր՝ քնաջինջ ի բոց սրբեցեսն:

Այս տողերուն մէջ զիե՛լ և է, զրչասցին, ակն ունիմ առաջին անդամները՝ հանգիստով կը բաժնուին երկրորդներէն, իսկ բուն գոր ասէն, յաչաց իմոց երրորդ անդամները՝ չորրորդներէն:

Բաց ի այն շեշտերէն՝ որոնք անդամներուն վերջին վանկին վրայ գտնուելով՝ գանոնք իրարմէ կը բաժնեն, տող մը կըրնայ պարունակել նաև ուրիշ շեշտեր՝ անդամներուն մէջ, ձայնական և կամ բանական. գոր օրինակ.

Ձայն շըռուկ / և բընդիւն / լըսէ և կոյ / սըն Հայկաւնայ:

Փոթորկին / ի թփփ շընչոյն / յարհազականն / ի լոյս շողշուղջ:

Հարցանի զի՛նչ / իբք իցին, / յորմէ կուտ / Կեքն զայցէ:
Թափուր / և ամայի / գտանէ զտեղին / յարի արանց,
Աստուած Կորն / իմոյ Հայկայ, / ցոյց ինձ, Կորեան / զշահելիս ուր:

Այ նեղածուս / դաւանանք, / զիշխրազնաց / աղուսանց ինչ:

Սակայն տող մը պակասաւոր և աններդաշնակ կ'ըլլայ, եթէ շեշտով վերջացող քառավանկ անդամի մը երրորդ վանկին վրայ գտնուի աւելի զօրեղ շեշտ մը. գոր օրինակ.

Արեցցին, Թո՛ւր / յաւին զիցին / տունք և տանաբք / ամբարըշտաց:

Եւ ի դաշտի / մանգաղ մի՛ խոտ / Կընձեցէ քնու / դաւարագիղ:

Այս երկու տողերուն մէջ այրնային աւելի զօրաւոր շեշտ ունի քան թող (դիցին), և մի՛ հրամայականը քան խոտ (հնձել). ուստի անդամատուժիւնը կը կազայ: իսկ եթէ աւելի պատշաճ և բնական կերպով շարենք բառերը՝ կ'ունենանք լաւ շեշտաւորուած ընտիր տողեր. այսպէս.

Թող այրեսցին, յաւին զիցին / տունք և տանաբք / ամբարըշտաց:

Եւ մանգաղ մի՛ / քնու կընձեցէ / ի դաշտի խոտ / դաւարագիղ:

Նմանապէս տող մը ներդաշնակ չ'ըլլար, մանաւանդ թէ տաղաչափական թեթուութիւն մը կը համարուի, եթէ հանգիստով վերջացած քառավանկ անդամի մը՝ երրորդ վանկին վրայ գտնուի շեշտ մը. գոր օրինակ.

Մի՛ քեզ, ս՛ր դու, / տագնապի զօրն / ի բուն ըզզունդ / քաշաց ի լուս:

Մըրկածու՛կ ծով / Բախէ արեօքն / ըզլիմանօնէ / ափափայտ:

Այս երկու տողերն ալ պակասաւոր են, առաջին անդամները բնական շեշտով կը բաժնուին յաջորդներէն այր և ծուփ վանկերուն մէջ, և դու և ծով պէտք է անցնին

երկրորդ անդամին, որով մնացած ան-
դամներուն շեշտերն ու կարգն ալ կը
խանգարուին, և արտասանողը անգամ մը
սխալելէ վերջը՝ պիտի ստիպուի ետ դառ-
նալ և կարգաւ անբնական և թերի շեշ-
տաւորութեամբ անդամներու, ինչպէս որ
վերը բաժնուած են ուղղագիծներով:

Նոյնպիսի անպատեհութիւն և թերու-
թիւն կը ներկայացընէ տող մը՝ եթէ քա-
ռավանկէ պակաս անդամի՝ յաջորդէ ան-
դամ մը՝ շեշտուած առաջին վանկին վը-
րայ, երբ այդ վանկը կրնայ նախընթա-
ցին կցուիլ բնական ընթացումով: զոր
օրինակ.

Աւելն / այր ցրնկեր / Սա թալացեալ / կնս զոգի:

Տողը կը կաղայ, վասն զի բնական ըն-
թացմամբ այդ կրնայ կարգացուիլ առեւտրի
հետ: — Ուրիշ օրինակ.

Նա խուսեր / յայնկոյս և յայն, / մերթ կրեւալ / և
մերթ ձածկեալ:

Կազ է տողը, վասն զի կրնայ կար-
գացուիլ՝ Նա խուսեր յայն / կոյս և յայն,
մերթ / երեւեալ... և ընթացողը հոս պիտի
անդարձանայ՝ որ տողին անդամները
պէտք էր վերը դրուած թերի բաժանն-
մունքով կարդար: — Ուրիշ օրինակ, որուն
մէջ երրորդ անդամը կրնայ կաղալ.

Ո՛վ ժամ յետին / տեսութեանս, / ո՛ն սիրտուր / քա-
ղուկք և թաթք:

Ուր ո՞ն՝ բնական առոգանութեամբ կըր-
նայ տեսարեանին հետ միանալ, քանի
որ ստորակէտը (ինչպէս միւս կէտերն ալ)
անպատեհառ նշան չեն անդամներու բա-
ժանումի, ինչպէս վերը ցոյց տուինք:

Կրնայ նաև մթին և աններդաշնակ ըլ-
լալ տող մը, եթէ անդամները շեշտաւոր
վերջացնելու նպատակով՝ անբնական կեր-
պով ետեւառաջ շարուին բառերը, մինչ-
դեռ շեշտին գեղեցկութիւնը պէտք է բնա-
կան շարքին մէջ դուրս ցատքէ: — Այս-
պէս, օրինակ իմն, քիչ մը բռնազոր և
անբնական են հետեւեալ տողերը.

Յարանըս կրեայս Աստուծ ըզվրէժս իր զրուշէ:
Եւ Փղըշտացույն անդոյն՝ ըզնոյն իտրայիլի սասնդէ:
Սոսկա, ո՛վ Սասուշ, է վեր ի թուխ ամպրոպս սասնիկ
Ըզմանոն կրեշտակ կրեղէն թեւօք կայիմ սասանեալ:

Բնդհակառակն որքան աւելի բնական
և սահուն են շեշտերը և հանգիստները,
երբ նոյն բառերը պարզագոյն շարադա-
սութեամբ հիւսուին ճարտար գրչէ մը՝
հետեւեալ կերպով.

Ըզվրէժս իր Աստուծ զըրէ յարանըս կրեայս,
Եւ որպէս է Փղըշտացի՝ նոյն յիտրայէլ սասնդէ:
Սոսկացիք, Սասուշ. անս է թուխ ամպրոպ է բարձուս
Սասանեալ կրեղէն թեւօք կայիմ զերշտակըն մասու:

Ո՛րքան շարադրութիւնը պարզ և բնա-
կան ըլլայ՝ այնքան ալ շեշտերու գեղեց-
կութիւնը ներդաշնակ պիտի հնչէ: Բազ-
մաթիւ ճարտարներու քիւրաւոր տողերէն՝
իրբև օրինակ մը պարզ շարուածքի և
սահուն ու բնական շեշտերու յիշեմ հե-
տեւեալները.

Հաստարմ մ ընդ թըրիցի ազէ կրաք կանայի,
Եւ շըննոց արեւ՝ վեհազ հողիք Նըվոն կելթի:
Արտ՝ որ ընդ փորձ անց անասան բազմահանդէս
մըրցանայ,
Չարեարիցի՝ արք է վտանգէն՝ զոր կին է ծնորս կրա-
գեաց:

Սահունութիւնը կը կաղայ միայն եր-
րորդ տողին մէջ անց անասան բազմա-
հանդիս՝ աւ ձայնաւորով ձեւացած անընդ-
հատ վանկերու դժուարահնչութեանն: Փո-
խէ անասանն անվեհերի՝ տողը կ'անուշ-
նայ, թէպէտ և սասակիչ և վեհերիչ նոյն
իմաստը չուսին:

Կարելի է բնաշուշտ շարունակել դեռ
նմանօրինակ զիտողութեանց շարք մ'ալ,
և խօսիլ բառերու ընտրութեան, ձայնա-
ւորներու սըղման, վանկերու անախորժ
նմանաձայն յաջորդութեան և ուրիշ պատ-
շաճութեանց և անպատշաճութեանց վը-
րայ, եթէ յօղուածս՝ տաղաչափական ա-
րուեստի դասագիրք մ'ընել ուզէի, ինչ
որ նպատակէս դուրս է: Ուստի կը փու-
թամ անցնելու ուրիշ խնդրի մը:

* * *

Թ. — Ինչպէս տեսանք մինչեւ հիմայ ըսածներէս՝ Նախնեաց տաղաչափութեան արուեստն և ոգին կը կայանայ՝ համազօր բայց ոչ համաժանկ անդամներու շարքին, և շեշտորու քնական կիրառութեան մէջ: — Առանց այս սկզբունքէն շեղելու՝ ընթերցողներու նորութիւն մը պիտի առաջարկեմ, որ թէպէտեւ մինչեւ օրս չէ գործածուած (զէթ ինծի ծանօթ եղած քերթուածներէ), սակայն ոչ միայն հետեւանք մ'է Նախնեաց գործարած սկզբունքին, այլ և ինքրին մէջ կարծեմ ներդաշնակ է, և ազատ՝ ձանձրոյթ պատճառող միակերպութենէ: Այս առաջարկած չափս է մետաստետոնեանը, բայց հայկական չափով մետաստետոնեան մը, որուն անդամներուն փոփոխութիւնները կ'ըլլան խառն գործածութեամբ հետեւեալ տողերուն.

- 1 — 4 — 3
- 2 — 4 — 3
- 3 — 4 — 3
- 4 — 4 — 3

Այս տողերուն վանկերու թիւը կը փոփոխուի ընդ մէջ 8ի և 11ի, բայց 8, 9, 10 վանկեր պարունակող տողերն ալ համազօր եռանդամ բաժանմունք կ'ունենան 11 վանկեր պարունակողներուն հետ. ինչպէս հայկական մեծ չափը՝ քառանդամի կը բաժնուի՝ 13-16 վանկեր պարունակող խառն տողերով:

Օրինակ մը (ինծմէ մէջ բերուած) թող վկայէ այս հայկական մետաստետոնեանին ներդաշնակութեան: Եթէ հաճոյ անցնի տաղաչափներու՝ զոհ պիտի Ձնամ. հակառակ պարագային՝ տհաճութիւննին զիս տժգոհ պիտի չթողու:

Մինչեւ հիմայ յատուկ նպատակով մը մէջ բերած գրարար օրինակներու հակառակ՝ առաջարկութեանս ճաշակիկ մը կ'ուզեմ տալ աշխարհարարով, յուսով որ

ապագային այս տեսակ տողերէ խորժ զգացողին ճաշակիկէ մ'աւելին յաշողիմ ընծայելու:

Նկարագիր պարտերագրի դաշտի մը մարտակոխէ մը վերջը:

Այսպէս իբրևու գէտ կըրին Յոտալ կը տանէին, և բարտին կշիռքն անորոշ կը տատանը զուգամէտ կշիռկիդ է յուսալիբ զգացման մէջ: Դաշտը ծածկիք են խորտակուած քիւր տէգիբ, Զարկոյտուած վանկներ, զէնք ու զբաններ, Եւ սուրբը՝ կուրծքի լանջի մէջ մըխուած, կամ գեանի վրայ ցերուցան տարածու. Ինքընքիդիբ փրուուք են շատ զիակներ, Եւ շատերն ալ երեսներ զէկ է նոյ՝ կարծես գետնը կը խածնեն մուգզին:

Ինկած է երկվարն իբ արիո՞ ինկած է զինակցին քով զինուորն, Պատկած է սոսիլն մտա օտոնն, Եւ շատ տեղ սեռածին վրայ փրուած կիտակներանն, և յաղթուածին վրան յաղթողն: Ոչ սեռելական լըուութիւն Եւ ո՞չ ալ քաշորոշ վանկերներ, Ամը խրժամայն խուլ խըղուրբտին մ'ամէն կողմ կը տարածուի, կատաղութեան կատանչեցը Եւ բարկ մուգզութեան մուշխներն, Թատանչեր կեծեծագին կուրծքերու՝ Որ խոցուած են մահացու վերքերէ:

Առաջ այնքան լուսացու պագալունու Չէնքեր ու զբաներ՝ արդ քըստմեկի կըրուայթ մը կ'ընծային տխրատեսիլ: Չի փայլիբ հրկթն, ոսկին չի շողար, Գեղանըշոյլ զոյներուն նեռքն իսկ չիկայ: Բոլոր զարգերն այն՝ որ առաջ այնքան նոս շահանչերով կը պընէին ցրացայտ Բիւր սաղաւարտներ ու շիզդեր, Արդ ոտնակոխ զեանաթաւայ են փրուած. Եւ ինչ որ շողանած չէ արեւն՝ Ապակներ է զայն փոշին աղոցիլ: Այսքան փոխուեր էին հրկու բանակներն:

ՏԱՍՍՈՑ. Ազատունմ Երոտաղիմի Եյոգ Թ. Ուրիակք 50-52

Այս չափը սակայն դիւցազներգութենէ աւելի յարմար կը համարիմ քնարերգական նիթներու, գեղծներու, նկարագիրներու, իմաստասիրական կամ բարոյախօսական քերթուածներու, ինչպէս է ընդհանրապէս զուգամանկ տողերով մետաստետոնեանն:

* * *

Ժ. — Մինչեւ հիմայ բսածներս կը վերաբերին պարզապէս հայերէն լեզուի եւ հայկական տաղաչափութեան արուեստին. ուստի չէ կարելի նոյները յատկացնել ինտե ուրիշ լեզուներու. վասն զի ամէն մէկ լեզու՝ իրեն սեփական բնադրոշմն ունի եւ ամէն ժողովուրդ՝ իրեն յատուկ ճաշակը. հետեւաբար այս ինչ լեզուի մէջ գեղեցկութիւն, վսեմութիւն, ներդաշնակութիւն եւ չափակցութիւն համարուածը կրնայ այն ինչ լեզուի մէջ նոյնպէս շըլլալ, մանաւանդ եթէ բաղդատութեան կը շիտղիս մէջ զրուին հին լեզու մը՝ նորի հետ, յարեթական մը՝ սեմականի հետ, եւ այլն:

Խօսքս տաղաչափութեան արուեստին ամփոփելով, ինչպէս կանխաւ զուրցցցի, քուտոր վանկերոս չափը հայերենի սեփականութիւն չէ, այլ որոշ ժամանակամիջոցի մէջ արաբականէն փոխ աւնուած եկամուտ արուեստ մ'է, որ ունի իրեն յատուկ ներդաշնակութիւնը՝ հաւասար ուրիշ շատ մը ժողովուրդներու նոյնպիսի թուական չափերով գործածած արուեստին: Իսկ հայկական չափը կրնայ Հայ ազգիս սեփականութիւնն համարուիլ, որքան ալ հետեւութիւն կամ նմանութիւն ունենայ ասորական եւ մանաւանդ երբայական չափերուն հետ. նմանութիւն մը՝ որ կը կայանայ պարզաբար անդամներու բաժանման մէջ, բայց ոչ շեշտաւորութեան, որովհետեւ անոնց քառանկամ տողերուն անդամներն ալ վանկերու համարանքով կը հաշուին եւ կ'անդամատուին:

Շեշտի անդամատուութեամբ կը բաժնուին տողերը նաեւ երոպական քանի մը նոր լեզուներու. մէջ, բայց ոչ թէ հայերենի նման քսնական՝ այլ ճայնական շեշտով: Սակայն արտասանութեան մէջ թէ՛ բանական եւ թէ՛ ճայնական շեշտերը՝ մի եւ նոյն ելեւէջի արդիւնքը կ'ընծայեն, մի եւ նոյն ներդաշնակութիւնը կը հնչեցնեն, այս տարբերութեամբ սակայն՝ որ մինչ-

զեռ ճայնական շեշտը վանկերու վրայ՝ միայն ճայնի ելեւէջ կը ծնանի, բանական շեշտը՝ ճայնի ելեւէջէն զատ՝ մտատրական պաշտօն մ'ալ կը կատարէ՝ երկու գաւնազան գաղափարներու սերտ միաադարձեանք ցոյց տալով, եւ մտաւոր կապին իրրեւ արտաքին նշան՝ ճայնի կապով ալ զանոնք իրարու հետ կը ծուէ:

Միտքս օրինակներով աւելի պարզեմ: — Իրրեւ օրինակ առնունք իտալական լեզուն, որուն տաղաչափութիւնը՝ հայկական չափին նման՝ շեշտաւոր հատածներէ կամ անդամներէ կը կազմուի, եւ իր բազմակերպ փոփոխութիւններով եւ լեզուական քաղցրութեամբ գերբազանցը կը համարուի՝ եւրոպական ուրիշ ազգերու տաղաչափական արուեստներուն մէջ: — Արդ, երբ իտալացին, օրինակ իմն, զուրցէ *umile preghiera* (խոնարհ խնդրում), *puro sacrificio* (անարատ զոհ), *terreno fecondo* (արգասաւետ երկիր), *cheta notte* (հանդարտ գիշեր), *corre veloce* (երագ կը վազէ), *ingiustamente si lagna* (անիրաւ կը գանգատի), եւ այլն, եւ այլն. իւրաքանչիւրը այս զուգեակ բաներէն՝ իրար հետ մտաւորական սերտ միութիւն ունին, բայց այդ մտաւորական միութիւնը նշանակող՝ ճայնական կապով մը զօրուած չեն իրարու հետ, այլ իւրաքանչիւր բառ ունի իրեն յատուկ ճայնի ելեւէջը, իրեն յատուկ շեշտը. ընդհակառակն անոնց համապատասխան հայերէն բառերը՝ խոնարհ խնդրում, անարատ զոհ, արգասաւետ երկիր, հսկայնորտ գիշեր, երագ կը վազէ, սեկրան կը գանգատի, քաց ի գաղափարական միութենէն՝ հիւսուած են իրարու հետ նաեւ սուր շեշտի (բանական շեշտի) կապերով, որով կարծես երկու բառերը մէկ բառ կը կազմեն. շեշտ մը՝ որ ճիշդ նոյն պաշտօնը կը վարէ՛ ինչ որ ունին մեր բազազրեալ բառերուն մէջ ա եւ յօդակապները, երկու գաղափարներէ խառն՝ մէկ գաղափար մը կազմելով, զոր օրինակ, արդար — ա — դատ, քար — ե — տեսիլ, եւ այլն:

Արդ, այս քսնական եւ ճայնական շեշ-

տերու իմացական տարբերութենէն դուրս՝ իտալական դիցազնական տողը, որ է մետասանավանկ (endecasillabo) չափը, իր կազմութեամբ և ներդաշնակութեամբ շատ նման է հայկական չափին, հետեւեալ կերպերով.

Ա. — իտալական տողի մ'անդամները կամ հատածները կը բաժնուին իրարմէ ձայնական օուր շեշտերով: — Հայկական չափի տողին անդամներն ալ կը բաժնուին սուր և բութ բանական շեշտերով: — Երկուքին ալ ձայնական արգասիքը կամ ելուէջի եղանակը մի և նոյնն է:

Բ. — իտալական մետասանոտնեան տողը կրնայ երեք տեսակ վերջաւորութիւն ունենալ, այսինքն՝ հատոս (tronco), համբոյր (piano), սահուս (sdrucciolo): — Հատոս կ'ըսուի վերջաւորութիւնը՝ երբ տասներորդ վանկին շեշտովը կ'աւարտի տողը՝ առանց վերջին հատածին, (որով տողը 10 վանկի կը վերածուի). համբոյր կը վերջանայ տող մը՝ երբ վերջին հատածը (11 երորդ վանկը) միավանկ ըլլայ. իսկ սահուս կ'ըսուի՝ երբ վերջին հատածը երկավանկ ըլլայ, (որով տողը 12 վանկ կ'ունենայ). զոր օրինակ.

Հատոս տող.

In quèsta per gran còlpe órrida età.

Համբոյր տող.

Cánto l'armi pietóse e'l Capítano.

Սահուս տող.

Célebrì l'aoqua e se la béa pur Píndaro.

Այսպէս ուրիշն իտալական մետասանոտնեանին տողի մը վանկերը 10-12 կը փոփոխուին՝ տաղաչափական վանկերով, այսինքն՝ սղելով մէկ վանկի՝ քովէ քով եկած ոչ — երկրարբառ ձայնաւորները, որոնք եթէ քերականական վանկեր համբուին՝ տող մը 13-16 վանկեր կրնայ ունենալ:

Այսպէս ալ հայկական չափին մէջ տողերն հաւասարավանկ չեն, այլ կը փոփոխուին 13-16 քերականական վանկերով:

Գ. — իտալական մետասանոտնեան տողը երեք տեսակ անդամատիչ շեշտերու փոփոխութիւններ ունի. այսինքն, հատած ձեւացնող շեշտը պէտք է գտնուի

1. կամ վեցերորդ և տասներորդ վանկերուն վրայ.
2. կամ չորրորդ, ութերորդ և տասներորդ վանկերուն վրայ.
3. կամ չորրորդ, եօթներորդ և տասներորդ վանկերուն վրայ.

Որով հայկական չափին պէս՝ իտալական 11ոտնեան տողն ալ չորս հատածներու կամ անդամներու կը վերածուի. և թէպէտ առաջին տեսակին մէջ երեք հատածներէ կը ձեւանայ տողը, բայց որովհետեւ բաց ի վեցերորդ և տասներորդ վանկերուն անդամատող շեշտերէն, անհրաժեշտ երրորդ շեշտ մ'ալ կը զբառնուի առաջին հատածին կամ առաջին, կամ երկրորդ, կամ երրորդ և կամ չորրորդ վանկին վրայ, ուստի տողին առաջին հատածը՝ փոփոխական վանկերով երկու անդամի կը վերածուի նիւթապէս, չորս անդամի կամ հատածի բաժնելով տողը. զոր օրինակ.

Súrgono innumerábili faville.
Dipinte di mirábil primavéra.
Impediva la vista e lo splendóra.
Seminatór di scándalo e di scísma.

Դ. — Ինչպէս որ հայկական չափին մէջ տեսանք թէ տող մը անդամատող սովորական երեք հատ շեշտերէն զատ՝ իւրաքանչիւր անդամի մէջ ալ կրնան երկրորդական շեշտեր գտնուիլ, այսպէս է նաեւ իտալական մետասանոտնեանին մէջ: — Հետեւեալ օրինակներուն մէջ բութ ձեւով կը նշանակեմ երկրորդական շեշտերը.

Le donne, i cavalier, l'arme, gli amóri.
Amór, virtú, pietà nel còr m'aocénde.
Ch'ì mi sia tårdi al soccórso leváta.
Che mòrte tánta n'avésse disfátta.

Ե. — Վերը յիշուած իտալական մե-
տասանտոնեանին առաջին տեսակին մէջ
(շեշտը վեցերորդ և տասներորդ վանկե-
րուն վրայ), առաջին հատածին շեշտը
կրնայ առաջին վանկէն մինչև չորրորդին
վրայ փոխուիլ (ինչպէս վերը օրինակնե-
րով ցոյց տուի Súrgono, Dipinte, Im-
pediva, Seminatór), կազմելով այս
կերպով առաջին հատած մը՝ յար և նման
հայկական չափին առաջին անդամին, որ
շեշտին դիրքին համեմատ կրնայ ըլլալ
միավանկ, կամ երկավանկ, կամ եռա-
վանկ և կամ քառավանկ:

Զ. — Դարձեալ նոյն տեսակ իտալական
մետասանտոնեանին մէջ՝ վերջընթեր ան-
դամը՝ հայկական չափին վերջընթեր անդա-
մին պէս անփոփոխ քառավանկ կը մնայ:

Է. — Երկու լեզուներուն դիւցազնական
չափին մէջ վերջին անդամին քանակի
տարբերութիւնը՝ էական զանազանութիւն
մը կը կազմէ, իտալականը մէկ վանկէն
երկուքի փոխուելով (համարյոք և սահուն
վերջաւորութիւններով) և երբեմն ալ ան-
հետանալով (հատու վերջաւորութեամբ).
մինչդեռ հայկական չափին մէջ վերջին
անդամը երեքէն չորս վանկի միայն փո-
փոխութեան ենթակայ է, և ոչ նուազ
քանակի: — Սակայն այս տարբերութեան
մէջ ալ՝ երկու լեզուաց չափերուն նմա-
նութիւնը կամ համեմատութիւնը պահուած
է, ըստ որում թէ՛ հայկականին և թէ՛
իտալականին մէջ ալ վանկի մը պակասը
կը լրանայ տողին վերջի բնական հան-
գիստով: — Բաց ասկէց՝ իտալական վեր-
ջին անդամը ըստ ինքեան օրեքի դեմ չի
ճիշդ հայկականին պէս նաեւ երեք կամ
նոյն իսկ չորս վանկերէ կազմել, թէպէտ
և իտալական տաղաչափութեան մէջ այդ-
պիսի արտօնութիւն մը շատ աններդաշ-
նակ կը հնչէ և խոտելի է. ինչպէս են,
օրինակ իմն հետեւեալ տողերը.

Inflammàti sospir dal pètto ròmponmisi.
A tòrto gli èmpi de' lor guài rammáricanosi.

Ը. — Իտալական մետասանտոնեանին և
հայկական չափին այս նմանութիւններուն

վրայ՝ կրնանք աւելցընել պատահական
նմանութիւն մ'ալ՝ յանգերու (rime) նը-
կատմամբ: — Ինչպէս յայտնի է Գր. Սա-
գիստրոսի և ուրիշներու քերթուածներէն,
հայկական չափը կրնայ թէ՛ յանգաւոր և
թէ՛ անյանգ յօրինուիլ: Սակայն անյանգ
տողը իրաւամբ գերնորեր են թէ՛ նախնի
և թէ՛ նոր տաղաչափները, քանի որ
յանգը (որ ըստ ինքեան գրեթէ տղայա-
կան և ականջ միայն զուարճացնող տա-
ռախաղ մ'է) ոչ միայն պատճառ կը դառ-
նայ շատ անգամ բռնագրոս տողերու, այլ
նաեւ անպէտ արգելք մ'է բանաստեղծին
սլացըներուն:

Նոյն դրութիւնը կը տեսնենք նաեւ
իտալական մետասանտոնեանին համար,
զոր կարելի է թէ՛ անյանգ և թէ՛ յան-
գաւոր շինել. այս տարբերութեամբ միայն՝
որ իտալական տողը հայկականէն կար-
ճազոյն և յանգերն ալ հայերենէն աւելի
ճոխ և քայքայահնչիւն ըլլալով, իտալացի
քերթողներէն շատերը յանգաւոր գրեր են
իրենց բանաստեղծութիւնները. մինչդեռ
ուրիշներ ալ, մանաւանդ թարգմանու-
թեանց մէջ, իրբեւ աւելորդ բեռ և ման-
կական խաղ՝ զանց ըրեր են յանգի գոր-
ծածութիւնը:

Յանգի գործածութիւնը՝ որ արեւելեան
ժողովուրդներու միջէն այնքան սիրելի է
Պարսից, Արաբացոց և թուրքերու, Հա-
յերն ի սկզբան չունէին (ինչպէս նոյց
կու տան Գոդրան Երզնրեւ և Ս. Գրոց
Օրինոյրիններ ու Սաղմունքը), և նաեւ
արարական տաղաչափութեան ազդեցու-
թենէն վերջն ալ՝ Շներհալին անգամ (որ
յանգաւոր տողերու ջերմագոյն կիրարկողն
եղած է) շատ քերթուածներ անյանգ տո-
ղերով շինած է, ինչպէս յայտնի է քանի
մը շարականներէ և ժամագրքի Առատտ
լուսոյ և Ալխարհ ամենայն հնգավանկ տո-
ղերով անգամ քերթուածիկներէն:

Իտալացիք ալ նմանապէս անյանգ ուսա-
նաորք (զոր verso sciolto, արձակ չափ
կը կոչեն), ոչ միայն իրենց դիւցազնա-
կան տողին՝ այսինքն մետասանտոնեանին
մէջ գործածեր են, այլ նաեւ ուրիշ կար-

ճագոյն անյանց տողերու (versi sciolti) մէջ. օրինակ իմի եօթնտեսնանի և ութուս- նեանի մէջ, ինչպէս Պետրարկա, Փ. Բալլի և ուրիշներ, կոչելով զանոնք settenari և ottonari sciolti, նոյն չափերով Ri- mati (յանգաւոր) կոչուածներէն զանա- զանելու համար:

*
**

ԺԱ. — Արդ, այսքան նմանութիւն- ները հայկական չափին և իտալական մե- տասանոտնեանին միջեւ՝ կարծեմ իրա-ւամբ կ'արդարացընեն համոզում մը՝ զոր ուրիշ տեղ ալ յայտնած եմ (Աղաւտուն Երուսաղեմի դիւցազներգութեան թարգմա- նութեանս Յասաչաքսերին մէջ), այսինքն՝ թէ իտալական մետասանոտնեանի թարգ- մանութեան համար՝ հայերենի մէջ յար- մարագոյն չափն է հայկական չափը, որ կը պահէ բնագրին ոչ միայն շեշտաւորու- թիւնը, այլ և անոր ներդաշնակութեան հոգին, անոր արուեստին զաղտնիքը, անոր տողերուն բնաղբոջմը՝ թէ՛ շեշտերու դա- սաւորութեան և թէ՛ անդամներ կամ հա- տածները կազմելու կերպին մէջ:

Սակայն այս կարծիքին աննպաստ դի- տողութիւն մը պիտի երեւնայ՝ եթէ ըսուի թէ իտալական մետասանոտնեանին վեր- ջին հատածին միավանկութիւնը (սմարտը տողերու մէջ՝ որով գրուած են դիւցազն- երգութիւնը և թատրերգութիւնը), բաղ- դատելով հայկական չափին վերջին ան- դամին եռավանկութեան և քառավանկու- թեան հետ, կը տեսնենք որ վերջինիս տողերն՝ իտալական տողերուն երկարու- թեան հետ համեմատական չեն. որով

թարգմանիչը պիտի պարտաւորի ստէպ բառեր աւելցընել և կամ պարզ ածական մը՝ հայերէն բարդ ածականով և կամ բայ մը՝ հայերէն երկու հոմանիշ բայերով բացատրել, և այլն, որպէս զի կարելի ըլ- լայ տող առ տող թարգմանել:

Այս իրաւացի տեսնուած առարկութեան և առերեւոյթ դժուարութեան հանդէպ՝ նախ պիտի դիտել տամ ես ալ՝ որ իտա- լական մետասանոտնեան մը հայկականի թարգմանած ժամանակ՝ հարկ չկայ որ երկու լեզուաց տողերուն մէջ զանուած իւրաքանչիւր անդամներն ալ փոխադար- ձարար իրարու համապատասխանեն, այլ բաւական է որ տողը տողին համապատ- շաճի:

Երկրորդ, դիտել կու տամ որ իտալա- կան տողին 11 վանկերուն և հայկական չափին 15 կամ 16 վանկերուն մէջ հա- մեմատութիւն ընող մը՝ պէտք չէ մոռնայ որ Ա. հայկական չափին տողի մը վան- կերը 13էն 16 փոփոխական են, և թէ այդ փոփոխութիւնն հսկան պայմանն է հայկերուն չափին, որով երկու լեզուաց տողերուն վանկերուն թիւերը չեն մնար 11 և 16 համեմատութեան մէջ, այլ միշին հաշտով 11 և 14ի. — Բ. Իրկու լեզուաց չափերուն այսպիսի վանկական համեմա- տութիւն ընող մը՝ կը մոռնայ անշուշտ որ իտալական մետասանոտնեանը 11 վանկ կը համրուի տաղաչափական և ոչ թէ քե- ղականակա վանկերով, ինչպէս կը համ- բուին 13—16 հայկական չափին վանկե- րը: Իբր օրինակ մ'առնենք Տասույի գը- բած ութեակներէն մէկը, որուն պէս են նաեւ ամբողջ քերթուածին (Աղաւտուն Երուսաղեմի) ութեակները:

Così nel cavo rame umor che bolle	ՔԵՐԿ. ՎԱՆԿ 12
Per troppo foco, entro gorgoglia e fuma;	» » 13
Nè capendo in sè stesso, alfin s'estolle	» » 13
Sovra gli orli del vaso, e inonda e spuma.	» » 15
Non bastano a frenare il vulgo folle	» » 13
Que' pochi a cui la mente il vero alluma:	» » 15
E Tancredi e Camillo eran lontani,	» » 13
Guglielmo, e gli altri. in podestà soprani.	» » 14

Արդ, մինչդեռ այս ութը տողերն ալ 11 տաղաչափական վանկերէ կազմուած են, ընդհակառակն իրարմէ տարբեր թուով և 11է աւելի քերականական վանկեր կը պարունակեն, հաշուի չառնելով բառերու

վերջին ձայնաւորներու կրճատումներն. օրինակ իմն, umor, alfin, eran. - Ուրիշ ութեակներու մէջ կը գտնուին նաև տողեր՝ քերականական 16 վանկերէ բաղկացած. զոր օրինակ.

Gli erano sempre, ovunque in guerra ei fösse (IX. 27)

Ch'ei fa degli altri, in voi l'usato ardire (IX. 28)

Tien salda in contra ai ferri e in contra all'aste (IX. 31)

Ահաւասիկ ուրեմն այս և ասոնց նման բիրաւոր օրինակներէ յայտնի կը տեսնուի՝ որ ինչպէս հայկական չափին տողը կը փոփոխուի քերականական 13-16 վանկերուն մէջ, նոյնպէս ալ իտալական մետասանտոնեանին տողին մէջ կրնան պարունակուիլ 13-16 քերականական վանկեր, որով երկու լեզուաց չափերն ալ փոխադարձաբար հաւասարագոր տողեր կ'ունենան:

Այս ըսածներէս սակայն չի հետեւիր թէ ուրեմն թարգմանիչ մը պարտաւորեալ է իտալերէն մետասանտոնեան քերթուած մը հայերենի դարձուցած ժամանակ՝ անպատճառ հայկական չափով թարգմանելու, և կամ այս վերջին չափով թարգմանած ժամանակ՝ անհրաժեշտ կերպով տողը տողին համապատասխան վերածելու: Կուտ և սեղմ ոճ գործածող թարգմանիչ մը կրնայ, մանաւանդ թէ լաւ կ'ընէ՝ ամփոփել քերթուածը (ի հարկէ առանց կրճատելու հեղինակին խօսքերը) քնազրէն նուազագոյն հայկական տողերու մէջ, երբ յատուկ եպատակ լուենեայ՝ հա-

յերենի մէջ ալ անփոփոխ պահելու իտալական քերթուածին երբեակը (terzina), քառեակը (quartina), վեցեակը (sestina), և կամ ութեակը (ottava): - Ըսածներուս հետեւանքն այս միայն կ'ըլլայ՝ որ իմ կարծիքով՝ հայկական չափը ոչ միայն յարմար, այլ և ամենայարմարն է իտալական մետասանտոնեանը թարգմանելու, մանաւանդ եթէ մէջ բերած պատճառներէս զատ՝ բաղդատութեան առնունք նաև իտալական բառերուն ընդհանրապէս կարճութիւնն և սահունութիւնը, և ընդհակառակն՝ հայերենի (մանաւանդ աշխարհաբարին) բառերու և հղովներու, բայերու, յետադիր հղովառուներու և յաւիտենական ուրիշ վերջացող գոյականներու երկարութիւնները:

Այս է ահաւասիկ այն համոզումը զոր ունիմ այս ինդրոյս նկատմամբ՝ վերոյգրեալ ապացոյցներով, որոնք կարծես լիովին կը բուեն արգարացնելու ունեցած համոզմանս տրամաբանական ըլլալը:

Հ. ԱՅԻՆԱՍ Վ. ՏԻՐՈՅԵԱՆ

